ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փամբակ համայնքի սիրելի բնակիչներ, շնորհավորում եմ բոլորիդ՝ հողագործից մինչև պետական աշխատող, բանվորից մինչև գիտնական, այս կարևոր օրվա կապակցությամբ:

Աշխատող և արարող մարդը հասարակության և պետականության հիմքն է: Հայրենիքը հենց նրա ձեռքերում է, և նա է ստեղծում վաղվա գալիքը:

Յուրաքանչյուրիդ կատարած աշխատանքը ձեր ոլորտում անգնահատելի ու անհամեմատելի է, և հենց ձեր սրտացավության շնորհիվ է, որ մեր համայնքն օրեցօր ծաղկում ու զարգանում է:

Շնորհակալ եմ բոլորիդ՝ համայնքի սանիտարական մաքրումն ապահովող աշխատակիցներից մինչև մեր լավագույն պետական այրերին, լավագույն գյուղատնտեսներից մինչև մասնավոր հաստատությունների ղեկավարներին, ձեր ամենօրյա աշխատանքը պատշաճ և որակով կատարելու համար:

Դուք եք, որ կատարելագործվելով դառնում եք աշխատասիրության և նվիրումի լավագույն օրինակները: Ձեր շնորհիվ է, որ ամուր է Հայրենիքի թիկունքը:

Շարունակեք ստեղծել, արարել և գործել՝ աստվածահաճո:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան